\* Ան ածուկանները, որք նմանութիւնն էա՞ն յարմարութիւնն  
 Իւնչանակէն, պրտիանն ինչոյնք իոպէն: Արեւ 232:

Է:

Պապկին 1) դէմքը 2) մարդուն դէմքին նման է: Ան  
 բժիշկը գուլութեան արժանի է, որն որ յոյսերնիս կըտ-  
 րած 3) հիւանդը ձեռք կըզարնէ 4) ըռնացընելու: Ան-  
 կը իր վարձքին արժանի է: Հարուստ մը կաղաչէր ծե-  
 ցերէն մէկուն, որ իր հարկաւորութեանը համար բան մը  
 խնդրէ. կըսէ ծերը, ես ստըկի 5) կարօտ 6) չեմ,  
 ձեռքներս ու անոր գործքը խնձի կօզտեն 7):

Սոյստանան 1) սուրտը 2) ինասանն յիսմէլէնի  
 պէնպէս: Օ հէրի մէկ օրնանայտ լայլէ պըր, յի սոստան-  
 սուլ յիսիւն 3) հասարայտ էլ զսուրտ 4) պիւլիւմէյէ:  
 Անիւն յիսիւն իւճիւնիւն լայլէ պըր: Օ կիւնիւնն պիւնիւն  
 լայլէ պըր իսիւնայրարայտն պիւնիւն, յի յիսիւն իսիւն  
 պիւն շէյ պիւնիւն, պիւն օնա իսիւնայր, պիւնիւն ահճիւն 5)  
 միւհասուրը 6) էօգ, էլէլիւն մէ օնանն իշէպիւնն պիւն  
 էլէլիւն 7):

1) Պապիկ, պիկ, աւ. 2) կերպարանք, նաց. 3) անուսա-  
 ցեալ. 4) յանձն առնում. 5) ինչք, ընչից. 6) կարօտ. 7) բա-  
 շահան էն:

Պատմութիւն:

Դ:

Սոսյի հայրը անգամ մը իր զէմպիլը 1) առաւ, երկրա-  
 գործի մը գնաց, ու կըսէ, խնձի ցորենն տուր: Կըսէ  
 անոր երկրագործը, ինչպէս իզմէ կուզես ցորենն առնուլ  
 որ հնձելու առնը 2) չաշխատեցար, կըսէ անոր ծերը,  
 որոնք որ չեն հնձեր նէ, հիչ ցորեն չեն մի առներ, կը  
 սէ անոր մշակը, չէ, ու այնպէս անտեղէն գնաց 3):  
 Եղբայրները, որոնք որ անոր հետն էին, օտքը ինկան  
 ու կըսեն, հայր, առ ինչ բան էր բրածդ 4). կըսէ  
 անոնց, եղբարք՝ ձեզի օրինակի համար ըրի, ինչու որ ուլ



- 1) Անշարժ հաստատիլ . 2) անշշուէնչ . 3) անպակաս .  
 4) աներկիւղ . 5) անխոտոր ճանապարհորդեւլ . 6) յանիրաւի ինչ :

Պատմութիւն :

ի :

Հայր մը իր աշկերտներուն կրպատմէր, որ տեղմը 1) երթալով աղքատ մարդ մը տեսաւ, որնոր քուրձ 2) մը ունէր, ա՛նոր կէսը իր տակը կրբոէր 3), ու կսովը ինքը զինքը կրծածկէր 4) : Բայց շատ պաղ ձմեռ ատեն ըլլալէն 5) ցուրտէն կըդողար 6), ու ինքը զինքը կըմխիթարէր ու կըսէր : Ի՛մ աստուածս ու թագաւորս քեզմէ կըգոհանամ, քանի՛ հարուստներ բանտի մէջ թօմրուխը դրած 7) են, իսկ ես մեղաւոր ըլլալով թագաւորի պէս անոյշ կըքնանամ 8), ձեռքս ու ոտքս կերկընցընեմ 9) ինչպէս որ կուզեմ նէ, համարձակ 10) կըքալեմ ուր որ ուզեմ նէ : Աշկերտները ասի լսելով, շատ շահ եղաւ ամենուն ալ :

Փեղեղընըրդեմ պերէ շայլարարընս նոգը կոկը իտի, յի պիւր մահարար 1) պիւր ֆոգարէ յիշէ իւօրպիւ, յի պիւր հարարը 2) զարարը, էարընը պըլընս պըրագըս րար 3), զէ էարընը յիւնիտի կօրիւր իտի 4) : Պատահոս չօ պօնը զագըլ օրոպ 5) սօլոգոտն լիլիւր իտի 6), զէ յիւնիտի լիւնընս կոկո պիւր իտի : Ետք կոկըն սանս էս րոպպիւ զէ յիտիշտհըմ, նէ գոտար հաթիսպի, լիւրոգընընս մահարար 7) օրոշ զարիլիլիւ յիմանիլիւ զար, զէ լագիւ պիւր իւնսհար օրոպ յիտիշտհ իկոլ լիւլիլ օրոպոս օրոպոս 8), կընի զէ այպըմը նասընի իտիքսէմ օրոպընը 9), զէ նիւրիւնի իտիքսէմ սիւրիւս 10) իւրիւրիւ : Ետքարարը պոնոս իշիտի, ճիւնիւնի պիւրիւ ֆայպո օրոպ :

- 1) Ուրէք . 2) քուրձ, քրձոյ . 3) արկանեմ . 4) ծածկեմ, էցի . 5) վասն սաստիղութեան ձմերայնոյն . 6) սարսուպեալ դողալ . 7) ի կոճեղս պնդիլ . 8) քաղցր ի քուն լինել . 9) մեկնեմ, էցի . 10) համարձակ :

Բ Ն Ա Գ Ի Ի Ր Ք

ՆԵՆԿԻ ԵԳԵԸԸ ՌԵՄԿԵԿԸՆ ԵՒ ՏԸՃԿԵ-  
ԿԸՆ ՕՐԻՆԵԿԸՅ:

ԳՂՈՒԽ Ը:

ա:

Եթէ դու կամիս, կամիմ և ես: Որպէս ես արարի, և դուք անիջիք: Հաւատացին և նորա, որպէս և մեք հաւատացար: Եկեսցուք և մեք զկնի քո: Գամք և մեք ընդ քեզ: Լչր ընդ իս և եղբայր իմ:

բ:

Հուրն շիջաւ: Տունն կործանեցաւ: Գուռն ինքնին բացաւ: Աղլաղաղկի փակեցան դրունքն: Բազում նաւք ընկզմեցան: Հանդերձք մեր պատառեցան: Այրն ոչ կարէ տեսանել: Աղն ոչ կարէ գնալ: Օղն ոչ կարէ բարւոք ուսանիլ: Բաղաք ոչ կարէ թաղէլ: Եթէ հսկեսցէ տանուտերն, գողք ոչ կարեն գողանալ:

գ:

Յետ երկց աւուրց սպառեցաւ կերակուրն մեր: Պետրոս նստէր ընդ սպասաւորսն, և ջննոյր առ լուսովն: Եւուրք իմ որպէս հովանի անցին: Եղբայր իմ ոչ խօսի ընդ իս: Լին երկոքին որդիք նորա ընդ նմա: Եղբայր իմ նստէր առ դրան: Սարիամ կայր առ խաչին:

դ:

Հայր և մայր նորա մեռեալ էին: Յետ երկց ամաց եկին հայր և եղբայր նորա: Յետ սակաւու միոյ քոյր իմ:

մայր իմ, և կրտսեր եղբայր իմ հիւանդացան: Յետ  
բաղում՝ ժամանակաց մայր իմ և քոյր իմ բժշկեցան:  
Չիւն և սառն 'ի հասանել ջերմութեան հալին:

Կ:

Եթէ կարող ես դնալ՝ առ սակաւ սակաւ դնասցուք ես  
և դու: Եւ և եղբայր իմ փոքր ինչ գժտեցաք ընդ մի-  
մեանս: Եւ և հայր իմ շրջէաք ընդ եզր ծովուն: Սա-  
ղիւն դու և որդիք քո եկեսջիք: 'Խու և եղբայր քո ար-  
ժանի էք մահու: 'Խու և այրն այն էիք 'ի միասին:

Կ:

Հիւանդացայ, և բժշկաց իմացեալ եկին առ 'ի տեսա-  
նել զիս: Ըճեցեալ մանկան եղև ուսումնասէր: Տեսեալ  
մովսեսի զհրեշտակն՝ զարմացաւ յոյժ: Եւ նոցա ելեալ  
'ի քաղաքէն փախեան: 'Ի ծագել արևու վախճանեցաւ:  
'Ի մեռանիլ մարդոյ՝ հողին ընդ նմա ոչ մեռանի: Փո-  
խեցայ ես 'ի փոխիլ հանդերձին: Օհնչ արարից, զի  
յոյժ կարճամտիմ յուսանել իմում: 'Ի ծագել արեգա-  
կան գազանք երթան յորջս իւրեանց:

Կ:

Ոչինչ կերեալ է իմ յեօթնեկիս յայսմիկ: Մարդ բնա-  
ուչ է իմ տեսեալ: 'Ի ծննդենէ մինչև ցայսօր չիք իմ  
բնաւ ուսեալ: Ոչինչ բարի գործեալ է իմ բնաւ:  
'Ի մտի եղեալ էր իմ երթալ աստի: Օհնչ գործ գոր-  
ծեալ է քո: Եթէ արժանի մահու ինչ գործեալ իցէ  
դորա՝ մեռցի: Մինչև էր փիլիսոպոսի կոչեցեալ, տեսի  
'ի ներքոյ թղենուոյն: Մինչև հաւու խօսեալ իցէ, ու-  
րացիս զիս: Մինչև 'ի քուն մտեալ էր նոցա, ել 'ի  
տանիս:

Ը:

Պարա է ինձ և զհոռում տեսանել: Պարտ է քել սիրել  
զաստուած: Հարկ է նմա հնազանդ լինել: Մեզ ոչ է

արժան անհնազանդ լինել ծերոց: Ոչ է ձեզ արժան  
թողուլ զիս առանձին:

ԳՂՈՒԽ Բ:

ւ:

Մտուած է տէր երկնի և երկրի: Որդի թագաւորին  
մեռաւ: Օտգումն արեգական ուրախ առնէ: Լայն է  
տերև խնձորենւոյն: Թռչունք երկնից բնակին ընդ հո-  
վանեաւ ծառոց: Երբեմն ապականութիւն օդոյ պատճառ  
է ժանտախտի: Եամանակ մահկանացուաց սուղ է:

բ:

Մհաւոր է ձայն որոտման: Գերեզմանն է տեղի սգոյ:  
Մհեղ է օր դատաստանին: Ոչ տեսի զերեսս մարդոյ  
բաց ՚ի քէն: Մտանելի է ժահահոտութիւն զիոյ: Լը  
վաճառական ականց պատուականաց:

ԳՂՈՒԽ Գ:

ւ:

Մարմին մեր հանդերձի պէտս ունի: Հօր և մօր խնց  
ոչ պատմեցի, և ահա քեզ պատմիցեմ: Հնազանդ  
լերուք ծնողաց ձերոց: Տուր ինձ հրաման: Հրամայեաց  
նոցա երթալ: Երևեցաւ նմա հրեշտակ: Տէրն եւ ծա-  
ռայից իւրոց: Աեղութեան համբերեցէք:

բ:

Լուր որդեակ խրատու հօր քո: Հնազանդ լեր պա-  
տուիրանաց վարդապետին քո: Յիսուս սաստեաց ալեաց  
ծովու, և հնազանդ եղեն հրամանաց նորա:

գ:

Գնաց եղբայր իմ ընդ նոսա յեկեղեցին: Իջին նոքա ՚ի  
ծովեզրն, և մտեալ ՚ի նաւ եկին ՚ի կղզի մի: Ե՛կ ընդ

իս 'ի տուն, և հաց կեր: Գողն մտանէ 'ի տուն առ 'ի գողանալ: Կաթիլ մի գինւոյ ոչ եմուտ 'ի բերան իմ: Սարդ հայի յերեսս, և աստուած հայի 'ի սիրտն:

է:

Բնդ երեկս մտաք 'ի տուն առն այնորիկ: Ոչ ետ նմա թոյլ երթալ 'ի տուն հօր իւրոյ: Եկն 'ի տուն հօր իմոյ, և ողջոյն տուեալ նոցա՝ բազմեցաւ: Իբրև եհասս 'ի դուռն եկեղեցոյն, ժողովուրդն ել ընդ առաջ նորա: Խոնարհքն մտանեն յարքայութիւն երկնից:

է:

Իբրև եկին առ իս եղբարքն իմ, պատմեցի նոցա: Ընձուկ յոյժ ունիմ 'ի բազում ամաց գալ առ ձեզ: Ես եկի առ ձեզ, եկայք և դուք առ իս:

### ԳԼՈՒԽ Դ.

ա:

Ոչ հովիւք արածեն զխաշինս: Ոչ ես տեսի զքեզ: Ոչ հրձիգ արար զքաղաքս մեր: Ոչ նա կոչեաց զիս: Ոչ նա առաքեաց զքեզ: Ոչ փորձէ աստուած զսիրելիս իւր: Տեսանես զայրն զայն: Կարիցես թուել զաստեղս: Ղանաչէք դուք զեղբայր իմ զպօղոս, ողջ իցէ: Ո՛րար զայս: Դու գողացար զանօթս զայսոսիկ:

բ:

Բացին զդրունս քաղաքին: Մէդ ծածկէ զճառագայթս արեգական: Ով կարէ թուել զաւազ ծովու, զչիթս անձրեաց, և զաստեղս երկնից: Ոչ դք ձանաչէ զսիրտ մարդոյ: Որդեակ մի մերժեր զխրատ հօր և մօր քո:

գ:

Յոյց մեզ զտուն քո: Հատո՛ ինձ զպարտս քո: Օայգին իմ տաց այլոց մշակաց: Բրիստոս յայտնեաց զանձն իւր աշակերտաց: Պատմեաց նոցա զամենայն ինչ կարգաւ:

74 :

Լատ. զղուպն 'ի ձեռն, և գնաց 'ի քաղաքն : Համբարձ  
 զձեռս իւր յերկինս : Եւ առաքեցից զքեզ յեգիպտոս :  
 Եւ որժամ զարգացաւ մանուկն, ետ զնա 'ի դպրոց :

75 :

Եւ բարձ ընդ գլխովն : Օգեցեալ էր հանդերձս նորս :  
 Եւ գիր կօշիկ յօտս քօ : Եւ ընդ քեզ հաց սակաւ, և  
 ջուր ամանով : Հաց ոչ եկեր, և ջուր ոչ էարբ : Աս-  
 պեցին 'ի պարանոց նորա վէ՛մ մի մեծ, և արկին 'ի ծով :  
 Արչափ սքանչելիս արար աստուած 'ի ձեռս առաքելոց :  
 Երկիրս ոչ կարէ պտուղ բերել առանց սերման և ջրոյ :  
 Եւ թէ քաղցեալ է թշնամին քօ հաց տուր նմա, և եթէ  
 ծարաւի է ջուր տուր նմա :

76 :

Աստուած զմարդն յայնպիսի պատիւ եհան, մինչև պար-  
 գեւել նմա զանձնիչխանութիւն, և խրատ ևս տայ և յօ-  
 ժարեցուցանէ անսալ հրամանաց իւրոց, բայց զկամակար  
 իշխանութիւնն ոչ հանէ 'ի նմանէ, և կարօղ է անսալ  
 և չանսալ հրամանացն, և ըստ գործոցն զվարձս իւր  
 ընդունի :

Այր ոմն յաղօթել իւրում բնաւ ոչ խնդրեաց  
 յաստուծոյ զոյս աչաց իւրոց, այլ միայն խնդրեաց  
 զհամբերութիւն :

ԳԼՈՒԽ Ե :

77 :

Եւ բաղում նեխութենէ որդունք գոյանան : Այ և  
 տուն իւր ապրեցաւ 'ի ջրհեղեղէն : Հատախօս լինելով  
 ոչ զերծցիս 'ի մեղաց : Մէգ ցրուի 'ի ճառագայթից արե-  
 գական : Ոչ ել բան սուտ երբէք 'ի բերանոյ իմմէ : Մով-  
 սէս ազատեաց զխորայէլ յեգիպտոսէ : Շաշակեցի սա-

կաւ մի 'ի մեղուէս յայսմանէ : Աստուած փրկեաց զիս յամենայն վտանգից : Առսին զոյս իւր առնու յարեգակնէ :

բ :

Յորժամ զարթիցես 'ի քնոյ, նախ քան զամենայն փառաւորեսցէ բերան քո զաստուած : Եթէ առնուցուս ջուր 'ի ծովէ՝ ոչինչ երևի պակասութիւն 'ի նմա : Արկիցուք ոչ սոսկ 'ի տանջանաց գեհննոյն, այլ մանաւանդ 'ի զրկելոյն 'ի տեսութենէն աստուծոյ : Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ, չար 'ի տանէ նորա մի պակասեցի : Արջիւնք հանեն զհատն ցորենոյ յորջէ անախ, և ցամաքեցուցանեն : Անասունքն ոչ կարեն ընտրել զբարին 'ի չարէն խորհրդի :

ւ :

Բարուն զարգարէ զերկիր խոտովք և ծաղկամբ : Ես իմով ձեռամբ դրեցի առ քեզ : Որ սիրէ զարծաթ, ոչ յազեսցի արծաթով : Չուանօք կապեցին զձեռս նորա : Ասխանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ : Ոչ յազեսցի ակն տեսանելով, և ոչ լցցի ունկն լսելով : Մի խնայեր խրատել զտղայ, զի եթէ հարկանես զնա գաւազանաւ, ոչ մեռանի : Չափաւոր կերակրովք շատանալ երկարէ զկեանս :

բ :

Այր ոմն հարեալ խոցեցաւ յեղբօրէ իւրմէ, և կալեալ ձեռօքն զխոցն իւր, զի մի հոսեսցի արիւնն գնաց խընդրել թողութիւն 'ի խոցողէն իւրմէ :

Որպէս միջիւնն համբերութեամբ 'ի գլուխ հանէ զգործ իւր, նոյնպէս և դու զոր ինչ սկսանիս, մի ձանձրութեամբ թողուցուս :

ւ :

Սուրբքն միշտ ուրախանան ընդ հրեշտակս 'ի յերկինս : Կայէն սպան զեղբայր իւր 'ի դաշտի : Ապագուցեալ էին

ի լերինս ընդ այլ քրիստոնեայս : Ի հնդիկս ոչ զք երբէք սպիտակ ծնաւ : Աղէովպաս ետես զյիսուս ՚ի ճանապարհի : Սարկոս ՚ի հռովմ գրեաց զաւետարանն : Լորթեբ ՚ի խցի իւրում : Եթէ մեռանիցիմ ես՝ թաղեսցիք զիս յայսմ գերեզմանի : Թագուցանէ վատ զձեռս իւր ՚ի ծոց, և ՚ի բերան իւր զանդաղի տանիլ :

բ :

Լորտմն եզիտ փայտ անկեալ ՚ի ճանապարհի, և եբեր ՚ի տուն : Լսէ ցնս մայրն, թէ և ՚ի հողմոց խորտակեալ գտեր, զիցես ՚ի տեղի իւր : Եւ նա տարեալ եդ, ուստի առեալն էր :

Երազոցն այլ և այլ պատճառք են : Երբեմն զորինչ զք ցերեկ խորհիցի ՚ի մտի իւրում, զնոյն ՚ի քուն տեսանէ յերազի : Երբեմն ևս զորինչ բնաւ չիցէ ածեալ զմտաւ, զնոյն տեսանէ յերազի :

### ԳԼՈՒԽ Գ :

ա :

Սի խօսիր չար զնղբօրէ քումմէ : Աարծեցի թէ զնղբօրէ քումմէ ասացեր : Օհ հարցանես զանուանէ իմմէ : Լուայ զոմանց, եթէ գործ ինչ ոչ գործեն, այլ հետաքրքիր շրջին : Լստուած վկայեաց զարդարութենէ աբելի : Լոր բարի ոչ երբէք խորհի չար զումբէ : Օփառաց ինչ ոչ հոգային սուրբքն :

բ :

Ախտեցին զնա զիտյտէ : Աալեալ զձեռանէ իմմէ եմոյճ զիս ՚ի տուն : Աալեալ զհերաց նորա քարշէր ընդ զառ ՚ի վայր լերինն : Բուռն եհար զհանդերձէ նորա զնորոյ, և պատառեաց : Եթէ յառներ ՚ի վերայիմ աաիւծ՝ ունէի զիտղից նորա, և սպանանէի : Աոհացիր միշտ զատուծոյ :

7:

Եթէ լուեալ իցէ քո գուժքէ, եթէ խօսեցաւ զքէն չար, և գայցէ նա առ քեզ, մի ցուցաներ նմա, եթէ լուեալ իցէ քո գայն բան, և մի տեսցէ տխրեալ զերեսս քո, այլ ընկալ զնա ուրախութեամբ, և յայնժամ ընդունել լի լիցին աղօթք քո առ աստուած:

ւ:

Օհասարակ գիշերաւ եմուտ 'ի քաղաքն: Յանկարծապէս զմիջառուրբ մթացան երկինք: Օինն ժամուն եկն 'ի տուն: Օայնու ժամանակաւ ներոն յարոյց հալածանս:

Հրէայք շուրջ եղեն զնովաւ և ասեն, մինչև յերբ թափես զողիս մեր: Պատեցին թշնամիք զքաղաքաւն պատնէշ: Լուսին շուրջ զաշխարհաւս գայ: Ենկեալ զպարանոցաւ պողոսի համբուրէին զնա:

բ:

Լուեալ ձորձս արկաւ զհւրեաւ: Երկին զնովաւ քղամիթ կարմիր: Եգամ էանց զպատուիրանան աստուծոյ: Ոչ ոք իշխէ անցանել զբանիւ թագաւորին: Երբ անօրէնք անցաննն զերդմամբ: Օիծաղին զինև թշնամիք իմ:

ւ:

Սի սիրեր զդատարկութիւն և զիտիկութիւն զպատճառս ամենայն մնասակար ախտից: Եմի ամի գետն նեղոս ոռոգէ զերկիրն եգիպտոսի: Յիսուս մնաց յեգիպտոս մինչև 'ի վախճան հերովդի արքայի: Եցաւ բանն եսայեայ մարգարէի: Ողջն տալէք պետրոսի և պողոսի բարեկամաց իմոց: Հրէայք մատնեցին զյիսուս պիղատոսի դատաւորին: Յանձն առնեմ ձեզ զեղբայր իմ զգրիգոր: Վարձաւ 'ի հռովմ քաղաքէ, և եկն 'ի տուն հօր իւրոյ:

բ :

Նախահարքն մեր 'ի վերայ մեծաց տրամութեանց կրելոց, վշտացան և այնու, զի կայէն անդրանիկն, սպան զեղբայր իւր զկրտսեր :

Ղաւիթ արքայ տիրեալ եփրատ գետոյ, վանեաց զզօրս ադրաւաղարայ արքային, և յաւարէ անտի աղգացն պարտելոց պատրաստեաց ոսկի և արծաթ բազում յոյժ սողովմոնի որդւոյ իւրում :

ԳՎՈՒԽ Լ :

ա :

Որդի մի էր նորա պետրոս անուն : Օհնչ յանցանք են իմ : Լն իմ եղբարք Հինգ : Որ ինչ իմ է, ամենայն քո է, և որ ինչ քո է, այն իմ է : Արք երկու էին 'ի քաղաքի միում, մին մեծատուն, և միւսն աղքատ : Մեծատանն էին հօտք բազում յոյժ, և աղքատին և ոչինչ :

բ :

Արք երկու բնակէին 'ի միասին բազում ժամանակս, և ոչ երբէք կագեալ էին ընդ միմեանս : Ի միում աւուր ասէ մին ցմիւսն, արասցուք և մեք կուի ընդ միմեանս : Իսկ նա ասէ ցնա, ոչ գիտեմ թէ որպէս լինիցին կուիք : Լը նա ասէ, ահա ես դնեմ աղիւս 'ի միջի, և ասեմ թէ իմ է, և դու ասասցես թէ ոչ այլ իմ է, և յայսմանէ սկսանի կուի : Իբրև զայս ասաց, առեալ զաղիւսն եդ 'ի միջի, և ասէ մին այս իմ է, իսկ երկրորդն ասէ բարկութեամբ, ոչ այլ իմ է, և միւսն հեղութեամբ ասէ, եթէ քո է, առ և գնա՛ ստտի :



ԳՆՈՒԽ Ը:

ւ:

Ի մաստասէրք փոքր աշխարհ ասացին զմարդ: Չիթենի յունարէն ելէա կոչի: Եւ կոչեցին զանուն նորա Յովհաննէս: Օմարմին կարօտ ասացին իմաստունք բժշկի, որպէս և հոգին կարօտ ստեղծաւ խրատու: Եւ ընայլ զբարւոյք մատակարարութիւնն պնդութիւն կարծէ:

Ի մտանել արեգական առաւել պայծառացեալ տեսանեմք զլոյս լուսնի: Իբրև մտանէք ՚ի գիւղն, գտանէք յաւանակ մի կապեալ:

բ:

Մարթ էր զայդ իւղղ վաճառել երեք հարիւր դահեկանի: Երկերիւր դահեկանի հաց չէ նոցա բաւական: Ոչ դահեկանի միօջ սաղ արկեր ընդ իս: Գնեաց զնա իննսուն դահեկանի:

գ:

Ըր ամաց մետասանից: Երկոտասան ամաց եմ ես: Տեսի մանուկ մի ամաց երկոտասանից: Յորժամ էր ամաց հնգետասանից մեռաւ հայր նորա: Պողոս էր յայնժամ ամաց վեշտասանից: Ըր ամաց քսան և հնգից: Ըմաց երեսնից էր դաւիթ ՚ի թագաւորել իւրում: Մովսէս էր ամաց հարիւր և քսանից ՚ի վախճանել իւրում: Սողոմոնն նստաւ յաթոռ դաւթի հօր իւրոյ՝ ամաց երկոտասանից:

դ:

Թագեան գերիս աւուրս: Ըրար հարսանիս զեօթն օր: Եղև սով գերիս ամս: Ընդ նստաւ զամիսս վեց: Ըրկին զիս ՚ի բանտ զաւուրս հնգետասան: Օգրն որջոյն կագեն: Ոչ խօսեցաւ ընդ որդւոյ իւրում զամս բազումս: Թագեան զեօթն օր ՚ի տան պառաւուր կնոջ միոյ: Չէր

կերեալ հաց, և ոչ արբեալ ջուր զերիս տիւս և զերիս զիշերս: Դուք կացձիք առ դրան քաղաքիս զգիշերս զայս:

Ե:

Եղաք օր մի առ նոսա: Կացաք անդ աւուրս եօթն: Եղև անդ ընդ եղբարս իւր աւուրս ինչ: Ըգաւ առ նմա այն օր:

Դ:

Մենայն որ դիւրաւ կրթի 'ի մանկութեան: 'Ի ծերութեան իւրում վատեցան աչք նորա: Յաւուրս արտաշեսի արքայի ոչ գոյր երկիր անգործ յաշխարհիս հայոց: 'Ի գարնանային և յաշնանային եղանակս ընդ առաւօտս և ընդ երեկս մեղք յաճախեն: 'Ի ձմերայնի կտրճին աւուրք, և յամարայնի երկարին: Յաշնայնի թօթափին տերեւք ծառոց: 'Ի գարնանային եղանակի բարեխառն անձրևօք երկիր դալարի: Յամենայն օր, յամենայն շաբաթու, յամենայն ամսոյ, յամենայն ամի քննեալ ըզբեղ, եթէ զոր առաքինութիւն ուղղեցեր: Ոչ է արժան հրէից գործել 'ի շաբաթու:

Ե:

Մշակ ոմն երկրագործ մեծատուն յոյժ, ցանկացեալ ուսուցանել որդւոց իւրոց զարհեստ իւր ասէր ցնոսա: Ո՛րդեակք իմ՝ գիտէք թէ որպէս հարստացայ ես, և դուք եթէ լուիցէք ինձ՝ հարստանայք յոյժ: Եւ նորա ասին ցնա, աղաչեմք զբեղ հայր, զի ուսուցես մեզ: Իսկ նա հնարս հնարէր, զի մի հեղգասցին, և ասէ ցնոսա. է օր ինչ յամին որդեակք, և եթէ որ հանդիպիցի յաւուր յայնմիկ 'ի գործս՝ հարստացի յոյժ: Ես 'ի ծերութենէ տարտամեալ մոռացայ զպատկեր աւուրն եթէ որ իցէ. սյլ դուք մի հեղգասջիք. զամն օղջոյն գործեսջիք, զի մի գուցէ օրն այն օրհնեալ զանց արասցէ զձեօք, և ոչ գաջիք 'ի գործս, և ընդունայն լիցին վիշտք և ջանք ձեր ամին օղջոյն:

ԳԼՈՒԽ Թ :

ւ :

Արեգակն ծագէ զճառագայթս իւր ընդ ամենայն աշխարհ : Աւետարանն քարոզեցաւ 'ի ձեռն առաքելոցն ընդ ամենայն տեղիս : Յաւուրս տրդատայ արքայի շինեցան եկեղեցիք ընդ ամենայն կողմանս աշխարհին հայոց : Պատմէր անուն քաջութեան նորա ընդ ամենայն կողմանս դաւառին :

բ :

Ելին ընդ դուռն քաղաքին : (Ենդ ո՞ր ճանապարհ գնաց : Որ կամի անցանել ընդ ծով , նաւու պէտս ունի : Ոչ իմ լեցի , և ոչ նորա . կտրեցէք ընդ մէջ : Եւ զաւիթ ընդ պատուհանն , և փախեաւ և ապրեցաւ : Երբց մեզ ճանապարհ և ասէ , գնացէք ընդ պողոտայս , և մի խոտորիջէք մի յաջ և մի յահեակ : Մինչդեռ ելանէին ընդ զառ 'ի վեր քաղաքին , տեսին զոմանո , որք գային հանել ջուր :

գ :

Աստուած կանխաւ գիտէ զամենայն վնասս , այլ կանխագիտութի նորա չէ պատճառ չարեաց : Որպէս յորժամ տեսանիցէ որ զընկեր իւր ընդ լպիրժ տեղիս գնացեալ , և ասիցէ՝ թէ գլորելոց է , նա ինչ եղև պատճառք գլորման ընկերին : Կամ եթէ տեսանիցէ որ զընկերն ընդ աւազակուտ տեղիս դիմեալ , և ասիցէ՝ թէ եղևն գտանէ , նա ինչ իցէ պատճառք վնասուն : Եւ թէ որչափ վնասս արգելու աստուած 'ի մարդկանէ , այն ոչ ամենեցուն յայտնի է :

դ :

Ուրախանան հրեշտակք 'ի յերկնս , ընդ ճգնութիւն սրբոց մարտիրոսաց : Եթանոսք հրաշացան ընդ համբարութիւն քրիստոնէից : Օտրմանալ պարտ է ընդ խորին

իմաստութիւն աստուծոյ: Բարիք ոչ նախանձին ընդ յառաջադիմութիւն ընկերաց իւրեանց, այլ մանաւանդ խնդան և ուրախանան, և զբարիս նոցա անձանց համարին:

Ե:

Աւազակք մտին զիշերի 'ի տուն ծերոյ ումեմն կողոպտել զխուց նորա, և առեալ զամենայն գնացին, և մնաց մի բրիչ միայն: Այս զայն ծերն 'ի ձեռս իւր, և ընթաց նայր զինի նոցա, ձայնէր ուժգին և ասէր, տարջիք և զայս ընդ ձեզ, զի մնաց սա 'ի սենեկի իմում: Օրմացեալ աւազակաց ընդ անյիշաչարութիւն նորա, զարձուցին զամենայն ինչս նորա 'ի սենեակ նորա:

### ԳՂՈՒԽ Ժ:

ւ:

Օրինչ քաղցրագոյն քան զմեղր: Այրարատ բարձր է քան զամենայն լերինս: Այլ այր իմաստնագոյն քան զբեղ: Աին զինի քան զնորն քաղցրագոյն է: Մեծ էր յովհաննէս քան զամենայն մարգարէս: Ղառն է քան զթոյն օձի: Ասիա ընդարձակագոյն է քան զԵրուսիա: Ոսկին ծանր է քան զամենայն մետաղս: Ուղտն փոքրագոյն է քան զփիղ: Օրինչ հզօրագոյն քան զառիւծ:

բ:

Այր ոմն եհարց ցմանուկ մի փոքր, և ասէ ցնա, բարւոք է լուել թէ խօսիլ: Պատասխանի ետ մանուկն և ասէ, եթէ անօգուտ են բանքն՝ թողացո՛ղնոսս, իսկ եթէ օգտակարք են, խօսեա՛լ փոքր մի: Այլ թէպէտև բարւոք իցեն բանքն՝ մի՞ երկարեր զխօսս, քանզի լուին լուագոյն է քան զբարի խօսս:

գ:

Մինչ միայն իցես մի զներ սեղան վասն կերակրոց յառաջ քան զժամն, և մի ասացես բան ինչ յառաջ քան

զհարցանելն . և մինչ հարցանեն, տուր պատասխանի վայելուչ բանիւ . և 'ի վեր քան զամենայն զգոյշ լեր, զի մի իբրև զիմաստուն որ մեծաբանեսցես յայն ինչ, զոր բարւոր ոչ գիտես :

դ :

Որ բարիս առնէ թշնամեաց իւրոց, մեծաց վարձուց լինի արժանի : Երկչորք ոմանք 'ի փոքունց վշտացլքեալ լուծանին : Եթէ յաղթեսցուք թշնամեաց մերոց՝ մեծաւ խնդութք դառնամք 'ի քաղաքս մեր : Տիկինն սաբայ եկն յերուսաղէմ՝ զօրու ծանու : Եշան սրբոյ խաչին հալածէ զբևս :

ե :

Եւր ոմն եհարց զսուրբ ճգնաւոր ոմն և ասէ, զինչ աւարտից, զի եթէ փոքր ինչ աշխատիմ, սիրտ իմ լուծանի և թուլանայ : Եսէ ցնա ծերն, եթէ կամիս յաղթել բնութեան քո՝ կալ քեզ օրինակ զսուրբսն, զի ապաւինեալք 'ի յոյս մեծի ողորմութեանն աստուծոյ, ամենայն դժնդակ փորձութեանց համբերեցին, և աստուած յետոյ մեծացոյց զնոսա : Երդ՝ պարտիմք և մէք գործոց նոցա նմանող լինել : Ասն այնորիկ գրեցան չարակրութիւնք նոցա, զի և մէք ընթերցցուք, և ուսցուք տանել մերոց փոքունց վշտաց :

զ :

Ոչ որ 'ի նոցանէ համարձակեցաւ խօսել ընդ իս : Ոչ որ 'ի մարդկանէ կարէ ուսանել ինչ անաշխատ : 'Ի մարդկանէ ոչ զոր տեսի անդ : Մի ոմն 'ի ծերոց մտեալ յեկեղեցին կայր յաղթս : Ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս : Ոմն 'ի զինուորաց տիգաւ խոցեաց զկողս քրիստոսի : Ոմանք 'ի ձէնջ ոչ հաւատան : Բազումք 'ի կռապաշտից հաւատացին : Ով որ 'ի փարթամաց զաստի կենցաղս անհոգութեամբ անցոյց : Այսք 'ի կենդանեաց 'ի պէտս մարդկան արարան, որպէս արջառ և ոչխար :

Ոմն ՚ի ճգնաւորաց եհարց զհայրն պամբոյ և ասէ, ընդէր դէք ոչ տան մեզ թոյլ գործել զբարին, ասէ ցնածերն, մի ասասցես զայդ, ապա թէ ոչ սուտ առնես զաստուած, մոնաւանդ ասա՛, ես ոչ կամիմ առնել զբարին, կամ ողորմութիւնս առնել, զի մահն քրիստոսի խորտակեաց զամենայն զօրութիւնս թշնամեաց մերոց:

Ը:

Մի ինչ համարիր զանձնդ, և ուր և կեցցես հանգիստ գտցես: Եւ ողովեցէք զհոտորսդ, զի մի ինչ կորիցէ: Եթէ հարցանէ որ ինչ զքեզ՝ վայելուչ բանիւ տուր պատասխանի: Եթէ աղքատաց տացես ինչ՝ մի հոգասցին միտքքո, եթէ շատ ետու: Եթէ որ չարիս ասասցէ զքէն՝ մի կազեր ընդ նմա: Ոչինչ ունիմ, և զամենայն ինչ ունիմ: Ոչինչ բերաք յաշխարհ, և ոչ տանիլ ինչ կարող եմք: Եհաւասիկ ես երթամ յերուսաղէմ, և որ ինչ ընդ իս անց անցանելոց իցէ չդիտեմ: Օր ինչ և ասիցէ ձեզ, արասցիք: Օր ինչ առնելոց ես, արա՛ վաղվաղակի:

Թ:

Օկնի աւուրց ինչ վախճանեցաւ: Եթէ աւուրս ինչ աշխատի որ, և ապա դադարի՝ նա ոչ կարէ ուսանիլ զքերականութիւն: Բնակէին սակաւ ինչ հեռի ՚ի միմեանց: Պատրաստեցէք մեզ սակաւ ինչ կերակուրս: Սակաւ ինչ հուր զորպիսի անտառս հրդեհէ: Ար բարւոք միտ դնէ, և այլ ինչ բաղում կարէ իմանալ: Ճ՛գնաւոր ոմն ունէր զայս սքանչելի կարգս, զի եթէ որ խնդրէր ինչ ՚ի նմանէ, ինքն ոչ յառնէր և տայր, այլ ասէր, երթեալ առցես որչափ և պիտոյ իցէ քեզ, և եթէ որ բերէր ինչ՝ ասէր, որդեակ՝ դիր անդր ՚ի տեղուջ խրում:

ԳՎ ՈՒՆ ԺԵ:

ւ:

Յաւուրց անտի բոբովամայ որդւոյ սողովմանի բաժանեցաւ թագաւորութիւնն հրէից յերկուս: Հոսէր արիւնն 'ի վերաց անտի, և ընդր զճոց կառաց: Յարեան նորա 'ի քաղաքէ անտի, և եկին յեգիպտոս առ փարաւոն արքայ: Տուբիա և հրեշտակն ուղեկից նստան առ արամբ գետոյն: Իբրև էջ տուբիա լուանալ յեզր գետոյն, վազեաց ձուկն մի 'ի գետոյ անտի, և կամէր կլանել զնա: Իրտեսքն առարեալք 'ի մովսիսէ զանգիտեցուցին զսիրտս եղբարց իւրեանց, և սատակեցան յանապատի անդ: Թէպէտև բազում ինչ ծածկեսցի յաշխարհի աստ, սակայն ոչ 'ի ծածուկ ինչ է յաստուծոյ:

բ:

Ար համբերեսցէն իսպառ նա կեցցէ: Ար ողորմի աղքատաց ոչ կարօտացի, իսկ որ դարձուցանէ զակն իւր 'ի նոցանէ, 'ի բազում կարօտութեան եղիցի: Ար անարգէ զտնանկն մեղանչէ, որ ողորմի աղքատի երանելի է: Բընակեցաւ 'ի քաղաքին, որ կոչէր նազարէթ: Ըմենքին որք ընդ նմա էին, մեռան: Հերովդէս կոտորեաց զամենայն մանկունս, որ էին 'ի բեթղէհէմ: Ար 'ի նաւին էին հաւատացին նմա, և ոչ որ գիտաց, թէ ով որ էր նա: Ճրագ լոյս տայ ամենեցուն, որ 'ի տանն իցեն: Են ոմանք, որք ոչ հաւատան: Աչինչ է 'ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի: Օինչ է այն, որ 'ի ձեռին քում է: Ելէքսիանոս երբէք երբէք խառնեալ ընդ աղքատան, որ 'ի դուռն եկեղեցւոյն, խնդրէր ողորմութիւն յայնցանէ, որք մտանէին յեկեղեցին:

դ:

Յամենայն գազանս, որք ստեղծան 'ի պէտս մարդկան, չիք այն ինչ, որ սիրէ զտէր իւր իբրև զուրն, և պահէ զպահպանութիւնն որա զցայգ և զցերեկ. թէպէտև հար-

կանէ զնա տէր իւր, սակայն նա առ 'ի նմանէ ոչ հեռա-  
նայ, և իբրև յորս ելանէ, և պատահիցի տեառն իւրում  
առիւծ սաստիկ, 'ի մահ մատնէ զանձն փոխանակ տեառն  
իւրոյ:

70

Օր տեսաքն և լուաք պատմեմք ձեզ: Օր դու ա-  
սես, և ես ասել կարող եմ: Կարգացի զթուղթն ձեր, զոր  
գրեցիք առ իս: Օր ոչն գիտեմ, զիարդ ասացից:  
Օինչ է այն զոր բարձեալ տանիս: Երեք են, զորս  
անհար է ինձ իմանալ: Յիշեաց, զոր արարն: Օբանն,  
զոր ասացեր յեռանդն, ոչ կարացի իմանալ, զի այլուր  
էին միտք իմ: Ոչինչ է, զոր աստուած ոչ գիտէ: Ոչինչ  
ունիս, զոր ոչ առեր յաստուծոյ:

71

Եղու, որ քան զամենայն տկար է, զերկասիրութիւն  
պատուէ, որոյ գործն ամենեցուն է պիտանի: Եր անդ  
այր մի, որոյ ձեռն իւր գօսացեալ էր: Եղու ոչ կարէ  
պատմել զփառս արքայութեան, որում արժանանան  
սուրբքն: Յաստուծոյ, ասէ սողովմոն, պարտ է խնդրել  
զիմաստութիւն, յորմէ և ինքն իմաստնացաւ: Ենթեմք  
խնդալով գործեն զմեղս, յորոց արդարքն զարհուրին: Ե  
գիշերին յորում մատնեցաւ յիսուս, եկն 'ի գիւղ մի,  
որում անուն էր գէթսէմանի: Ենդ նոյն ճանապարհ ընդ  
որ եկն, գնաց:

72

Թուարանութիւն գտին փիւնիկեցիք, զի վաճառա-  
կանք էին, և թուարանութեան պէտս ունէին: Իսկ զե-  
րաժշտութիւն գտին յոյնք, զի որփէոս յոյն էր ակզաւ,  
զորմէ ասնն նախ գտանել զերաժշտականն: Իսկ զաս-  
տեղաբաշխութիւնն գտին քաղզէացիք, վասն զի անամս  
և հանապաղ ջինջ գոլով օդոյն, զիւրաւ կարացին ըմբռ-  
նել զշարժմունս աստեղաց: Իսկ զերկրաչափութիւն  
գտին եգիպտացիք, քանզի 'ի ծովանալ նեղոս գետոյ, և

ի խառնակել զսահմանս արտավարացն կռիւք և սպան-  
մունք լինէին եգիպտացւոցն ՚ի վերայ իւրաքանչիւր սահ-  
մանի. մինչև իմացան չափ, որով գտանէին զսահմանս  
իւրաքանչիւր արտավարացն, ուստի յառաջ եկն երկրա-  
չափութիւն :

ԳԼՈՒԽ ԺԲ.

ա :

Բազում անգամ քան զՏեթանոսս յետնեալ գտանիմք  
քրիստոնեայքս : Վրութասցուք մեզս որքո՞ւ անցուցանել  
զբարկութիւնն աստուծոյ : Արպէս սկսաքս, ՚ի նմին կա-  
տարեսցուք : Օհնչ իրք իցեն, զոր լուսաքս : Ար ստեղ-  
ծերդ զիս, ողորմեա ինձ : Ըյդպէս արասցուք, որպէս ա-  
սացերդ : Ըսէր զճշմարտն, եթէ ոչինչ գիտեմ յայն-  
ցանէ, զոր ասէքդ, այլ նորա ոչ հաւատային նմա ամե-  
նելին : Օր ասէքդ, ցուցէք գործով :

բ :

Տունս, զոր ես շինեմ, մեծ է : Չբնորս խոր է : Սա-  
տեան առ յիսուս աշակերտքն, և ասնն. տեղիս անապատ  
է, և օրս տարածամեալ, արձակեա՞ զժողովուրդս, զի եր-  
թեալ գնեսցեն իւրեանց կերակուրս : Այր է պատանեակդ  
այդ : Այր հրամանաւ շինէք զտունդ զայդ : Բաց զպա-  
տուհանդ, որ հայի ընդ արևելս : Արդւոյ քօ իցէ պատ-  
մուծանդ, եթէ ոչ : Այր է մատանիդ, գինտդ, և գա-  
ւազանդ : Սուտ ՚ի քաղաքդ, և պատմեսցի քեզ, զինչ  
պարտ իցէ առնել :

գ :

Սամբս բնաւ ոչ ախորժէ զհիւանդանալն : Սարմինս բազ-  
մապատիկ հիւանդութեամբ օր ըստ օրէ տկարանայ : Ա-  
քաղցրիկ որդեակ, ուր արդեօք իցես, զի անունդ կայ,  
և դու ոչ երևիս : Ընդ ոչ տեսի զօր յազգէս հայոց :

Երբ իցէ ինձ արձակիլ 'ի մարմնոյս : Այսպէս երթի-  
ցուք որպէս և եմ իսկ, անծածուկ գլխովս և բոկ ոտիւքս :

74

Այր ոմն ցանկացեալ կրօնաւոր լինել, գնաց առ ծեր  
ոմն, և յայտնեաց նմա զխորհուրդ իւր : Ասէ ցնա ծերն,  
եթէ կամիս կրօնաւոր լինել, երթ ցրուեա՛ զինչս քո, և  
եկեալ նստցիս 'ի սենեկի քում : Աւ նա գնաց վաղվա-  
ղակի, և ըստ խրատու ծերոյն բաշխեաց զամենայն ինչս  
իւր աղքատաց, բայց միայն 'ի պէտս իւր եթող դա-  
հեկանս հարիւր, և եկեալ նստաւ 'ի սենեկին : Օկնի  
աւուրց ինչ ասեն ցնա խորհուրդքն, հնացեալ է դուռն  
խցիդ, նորոգեսցես զսա. և եկեալ պատմեաց զայն ծե-  
րոյն, եթէ խորհիմ 'ի միտս իմ նորոգել զդուռն խցին : Ասէ  
ցնա ծերն ոչ ասացի քեզ թէ ցրուեա՛ զինչս քո. արդ  
զմնացեալն զայն ևս բաշխեա՛, արար նա զհրամայեալն,  
բայց ևս մնացոյց անտի դահեկանս տասն : Օկնի ժա-  
մուց ինչ դարձեալ ասեն ցնա խորհուրդքն, ձեղուն սե-  
նեկիս հին և փտեալ է, պարտ է քեզ շինել զսա, և  
գնացեալ պատմեաց և զայս ծերոյն : Ասէ ցնա ծերն, ու-  
նիս և այլ ևս ինչս ցրուեսցես գնա ևս, զի հանգիցես,  
և գնացեալ ցրուեաց և զտասն զայն դենար, և յայնմ  
օրէ խորհուրդք իւր հանգուցին գնա :

ԳԼՈՒԽ ԺԳ :

iii

Օկնչ զիւրին է, սիրել զամենայն զք, և սիրելի լի-  
նել յամենեցունց, եթէ կագել և կուռիլ ընդ ամենե-  
սին : Հողմ՝ շարժէ զտերևս ծառոց : Տերևք ծառոց շար-  
ժին 'ի հողմոց : Արրիկ սաստիկ հողմոյ 'ի տեղիս տեղիս  
զէնս կործանեաց : Եկնք 'ի բազում տեղիս կործանե-  
ցան 'ի սաստիկ մորկաց : Այլումպոս եզիտ զամերիկա զնոր  
աշխարհ : Բազում նոր կղզիք գտան 'ի հմուտ նաւա-

պետաց : Արդեակ պատուեալ զձերս, զի և դու պատուեսցիս 'ի ծերութեան քում :

բ :

Ամն 'ի ճգնաւորաց յանցուցեալ էր, վասն այնորիկ ժողովեցան, և կոչեցին և զսուրբն անտոն, և նա ոչ կամեցաւ գնալ . դարձեալ աղբ արարին, և ասեն, եթէ ամենեքեան քեզ ակն ունին և մնան . իսկ նա ըստ կամաց նոցա յարուցեալ էառ փսիադ ծակ, և լցեալ զայն աւաղով՝ եդ 'ի վերայ թիկանց իւրոց, և այնպէս եկն : Աւ ելին ամենեքեան ընդ առաջ նորա, և իբրև տեսին զնա յայն կերպարանս ասեն, զինչ է այդ հայր : Ասեցնոսա այս իմ մեղք են, որք սորեն զկնի իմ, այլ ես ոչ տեսանեմ, և ահա այսօր եկի դատել զայլոյ մեղս : Աթէ կամիմք զի թողցին մեզ մեղք մեր, և մեք թողուցումք զմեղս այլոց : Արքա իբրև լուան զայս, ինչ ոչ կարացին ասել ցնա, և այր իւրաքանչիւր գնաց 'ի տեղի իւր :

գ :

Ամն յեղբարց յորժամ բնակէր 'ի վանս վասն ամենայն դոյզն իրաց արագ շարժէր 'ի բարկութի . եղկելին ձանձրացեալ յիւրոց անկարգ գնացից վարանէր յանձն իւր, թէ որպէս ազատիցի յախտէ անտի : Արդ՝ ելեալ 'ի վանացն գնաց յանապատ հեռի յայր ինչ, և անդ հանդարտեցաւ : Իսկ 'ի միում աւուր լցեալ զպնակն ջրով, եդ մերձ իւր, և հեղաւ առ ժամայն : Ալից դարձեալ, և այն ևս թափեցաւ թաւալեալ : Ալից երրօրդ անգամ, և իբրև դարձեալ հեղաւ . բարկացեալ էառ զպնակն և ևհար զքարի և խորտակեաց : Օկնի ժամուց ինչ իբրև դադարեաց բարկութի նորա 'ի միտս եկեալ գիտաց, եթէ միայն կեալն ոչ կարէ դադարեցուցանել զչար ատես . այլ մանաւանդ ուր և իցէ որ պարտ է զհամբերութիւն յանձին ունել : Հետ այսորիկ դարձաւ 'ի վանս, և կրթութիւն զանձն համբերել ամենայն նեղութեանց :

ԳԼՈՒԽ ԺԳ :

ւ :

Ի շնչել հողմոյ մէզն փարատի : Ի ծերանալ մարդոյ վատի տեսութիւն աչաց նորա : Ի ցօղել ամպոց աճնն դաւարիք : Ի շարժել բարկութեան քո մի բանար զբերան քո :

բ :

Ի ծնանել յիսուսի ՚ի հրէաստանի, թագաւորէր ՚ի վերայ հայոց արգար, որ էր յարշակունի ազգէ այր իմաստուն և հանձարեղ : Գէս եղև սմա երթալ յերկիրն պարսից առ ՚ի խաղաղացուցանել զարտաշէս արքայ պարսից, և զեղբարս նորա, որք գժտեալ էին ընդ միմեանս վասն թագաւորութեան : Եւ անդ պատահեաց նմա ցաւս, որում ոչ կարացին օգնել բժիշկքն :

գ :

Երթամ ձուկն որսալ : Եկին ՚ի տուն նորա խնդրել զնա : Մարդ մի խնդրեմ խօսել ընդ նմա, և ոչ գտանեմ : Հրեշտակք եկեալ էին տանել զհօգի նորա : Յետ ծննդեանն քրիստոսի գան յամենայն ազգաց տեսանել զայրն և զմուրն բեթղէհէմի և երկրպագանել նմա : Յետու առաքեաց երկուս երիտասարդս լուսեւել զերկիրն զաղտ :

դ :

Յայնժամ յիսուս բժշկութիւնս կատարէր ՚ի հրէաստանի առանց դեղոց, և լուեալ զայն արգարու, առաքեաց զսուրհանդակ իւր, և զայլ արս փառաւորս ՚ի միասին, և գրեաց առ յիսուս այսպէս : Եբզար որդի արշամայ, առ յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար յերուսաղէմացւոց աշխարհին ողջոյն : Ելուեալ վասն քո, և վասն նշանաց քոց զոր առնես, զմի ինչ յերկուց աստի հաստատեցի ՚ի միտս իմ. զի կամ աստուած իսկ ես յերկնից իջեալ, և զայդ առնես, և կամ աստուծոյ որդի ես : Եւ

այ ևս վասն հրէից, եթէ տրտնչեն զքէն. քաղաք մի փոքրիկ գեղեցիկ է իմ բաւական երկոցունցս, աղաչեմ զքեզ զալ և լինել ընդ մեզ : Յորժամ հրեշտակքն արգարու եկին յերուսաղէմ, պատահցան այնմ ժամու յորժամ յիսուս յաւանակաւ ելանէր յերուսաղէմ, և մատուցեալ առ փիլիպպոս և առ անդրէաս, ետուն նոցա զթուղթն արգարու, և նոքա զթուղթն հանդերձ ընծայիւք մատուցին առ յիսուս :

Է :

Մղաչեմ մի անողորմ լինել : Քաւ լիցի, կամ, մի լիցի քեզ առնել զբանդ զայդ : Ձգեաց արբահամ զձեռս իւր առնուլ զսուրն, և զննուլ զորդին իւր : Եւ ըստ կարի իմում ճգնեցայ պահել զպատուիրանս աստուծոյ : Խորհեցան ՚ի ծածուկ արկանել զնա ՚ի ծով : Կամիմ զամենեսեան ՚ի գործս վաստակել, քանզի զամենայն չարիս դատարկութիւնն ուսոյց :

Ը :

Յիսուս հրամայեաց թովմայի գրել պատասխանի արգարու այսպէս : „Երանի այնմ, որ ոչ իցէ տեսեալ զիս, և հաւատայցէ, . . . փոքր ինչ ժամանակ վն մատակարարութեան ինչ առաքեցայ այսր, և ապա վերանամ առ նա, որ առաքեացն զիս, և յայնժամ զմի յաշակերտաց իմոց առաքեցից առ քեզ, կեանս տալ քեզ, և որոց ընդ քեզ են“ : Առաքեաց ընդ թղթին և զանձնազործ պատկեր իւր ՚ի սուրբ դաստառակին : Եւ յետ յարութեանն քրիստոսի լուեալ արգարու զգալուստ թաղէի առաքելոյն յուռհա, իսկոյն կոչեաց զնա, և ընդ մտանելն ՚ի ներքս անկեալ թագաւորն ՚ի գահոյից երկիրպագանէր նմա, և թաղէոս ձեռն եղեալ ՚ի վերայ նորա անուամբն յիսուսի մկրտեաց զթագաւորն, և զբաղմութիւն քաղաքին և շինեաց նոցա եկեղեցիս, և ձեռնադրեաց զադդէ եպիսկոպոս քաղաքին փոխանակ իւր :

## ԳԼՈՒԽ ԺԵ:

ւ :

Արդեհ 'ի փոքունց սկսեալ մեծանայ, և կիզէ զամենայն նիւթ: Մոլորեալ յուղւոյն ոչ գիտեաք թէ յո՛ երթայաք: Օձեռանէ կալեալ տարան 'ի տուն իւր: Հանեալ զվերարկուն եդ ընդ սնարիւք, և ննջեաց:

բ :

Ան ուրումն էր անդաստան, և 'ի ծուլութենէ իւրմէ կորդացեալ եղև այն, և լի եղև փշով ըստ փշալից անտառի: Յետոյ կամեցեալ սրբել զնա, ասէ ցորդին իւր, գնաս որդեակ, և սրբեա՛ զարտն զայն, իսկ նա գնաց, և իբրև ետես զբազմութիւն փշոց կարճամտեալ վհատեցաւ, և ասէ, երբ կարացից սրբել զսա, և անկեալ անդ ննջեաց մինչև ցերեկոյն: Եւ ապա գնացեալ հայր մանկանն տեսանել թէ զինչ գործեալ իցէ նորա, և եգիտ զի բնաւ ոչ աշխատեալ էր, և ասէ, զինչ է այս որդեակ զի ոչինչ գործեալ է քո, ասէ մանուկն յհայրն. յորժամ եկեալ տեսանեմ զբազմութիւն փշոցն՝ զարհուրիմ, և յահէ անտի թմրեալ ննջեմ մինչև ցերեկոյ: Եսէ հայրն ցնա, որդեակ յամենայն աւուր սրբեալ գործեա՛ քեզ անկողին, և անդ ննջեա՛, և յաջողեսցին գործքքո: Իսկ որդին արար ըստ բանի հօրն, և 'ի սակաւ աւուրս սրբեցաւ անդաստանն այն, և սերմանեալ ցորեան, առին զարդիւնս նորա:

գ :

Յուդա մատնելոց էր զյիսուս: Յորժամ տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ, ասէք թէ անձրև լինելոց է, և լինի այնպէս: Բրիստոս գալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս: Այնպէս կեաց, իբր թէ վաղիւ մեռանելոց ես: Յիշեա՛ զօր մահու քո, զի երբ և է մեռանելոց ես: Անդ ամենայն գործոց քոց համարս տալոց ես:

դ:

Ունիմ ինչ ասել քեզ : Կամ, Բանք ինչ են իմ ընդ քեզ : Օ ինչ ունիս խօսիլ ընդ իս : Մինչ հանդերձեալ էր մեռանել, կային մերձ առ նմա բազումք ՚ի բարեկամաց նորա : Օ ինչ պիտոյ է ինձ այս կեանք, եթէ մեղօք հասանէ ինձ կեալ :

Է:

Երբեմն հայրն մակար գնացեալ էր յեգիպտոս, և իբրև եկն ՚ի սենեակ իւր, եգիտ անդ այր մի, որ կողոպտէր զխուց նորա, և զկարասին հանեալ գնէր ՚ի վերայ գրաստու իւրոյ : Օտրն իբրև ետես զնա, սկսաւ օգնել նմա որպէս զօտար ոք, և բարձեալ հանդարտութեամբ յուզարկէր զնա, և ասէր, ոչինչ բերաք յաշխարհս, և ոչինչ հանելոց եմք ընդ մեզ աստի, տէր ետ, և տէր էառ :

ԳՒՈՒՍ Ժ.Օ:

ււ:

Անյիշատակութիւն երախտեաց ատելի է աստուծոյ և մարդկան : Հեղումն արեան մարտիրոսաց փարատեաց յաշխարհէ զխաւար կռապաշտութեան : Ոչինչ է յամենայն ախտս չար քան զլրբութիւն, քանզի ծնօղ է ամենայն չարեաց : Անասունք եղեն վասն սպասաւորութեան մարդկան : Աստուած ստեղծ զճաղիկս ՚ի զբօսանս և ՚ի բժշկութիւն մարդկան : Քրիստոս եկն յաշխարհ ՚ի խընդիր կորուսեալ ոչխարին :

բ:

Միայնակեաց ոմն յոյժ հանճարեղ և սուրբ ոչ եգիտ առժամայն իւր տուն բնակութեան. էր անդ և ծեր ոմն, որ ունէր այլ սենեակ առանձին. յորժամ գիտաց եթէ կարօտ էր միայնակեացն սենեկի, հիւրընկալեաց զնա ՚ի սենեակ իւր : Եւ ահա բազումք գային ՚ի տես նորա, և

բերէին զպիտոյս նորա առատապէս: Եւ սկսաւ ծերն  
այն, որ տէր էր տանն, ռեսալ ընդ նմա, և առաքեաց  
զաշակերտա իւր և ասէ, գնա՛ ՚ի տեղւոյէդ զի ինձ պիտոյ  
է տուն իմ՝ և թէ ոչ գնասցես կամաւ, գաւաղանաւ ար-  
տաքսեցից զքեզ ակամայ: Գնաց աշակերտն և ասէ ցնա  
ծեր իմ առաքեաց զիս առ քեզ, և ասէ, որպէս կեաս  
յաւուրս յայսմիկ. և նա ասէ, ասասցես զինէն, աղօթել  
վասն իմ, զի ծանրացաւ ստամոքս իմ: Եկեալ եղբայրն  
ասէ խնդրեսցէ այլ սենեակ, և վաղվաղակի իջնեսցի ան-  
տի, բայց աղաչէ ներել մինչև ցկիւրակէ:

76:

Յիշեա՛ զերս քո յաշխարհէ: Կալան զանցս լեռնային  
կողման, զի ընդ այն էին մուտք ՚ի հրէաստան, և դիւ-  
րին էր արդելուլ, քանզի նեղ էին, և կարէին պահել  
արք երկու: Յիսուս յետ դարձին յեգիպտոսէ բնակեցաւ  
՚ի նաղարէթ: Կոստացաւ մեզ քրիստոս զհանգիստ յար-  
քայութեան իւրում: Մարգարէքն յառաջագոյն գուշա-  
կեցին զգալուստ քրիստոսի յաշխարհս, և զդարձ հե-  
թանոսաց ՚ի հաւատս: Մարտիրոսք համբերութիւն տանջա-  
նաց առաւել զարմանալիք էին, քան սքանչելագործութիւն:

77:

Իբրև եկն կիւրակէն, և ոչ գնաց, յայնժամ առեալ  
ծերն զցուպ իւր, գնայր հանել և վանել զնա: Ըսէ ցնա  
աշակերտն, ես նախ երթայց, զի մի՛ գուցէ օտար ոք  
իցէ անդ: Եւ յառաջեալ եկն աշակերտն առ ծերն, և  
ասէ, ծեր իմ գայ առ քեզ յայցելութիւն: Իսկնա,  
իբրև լուաւ զտէր ծերոյն զոր ցուցանէր առ նա, ել ընդ  
առաջ նորա, և անկեալ առ ոտս նորա երկիրեպագնմա  
և ասէ, մի աշխատ լինիր հայր, ես եկից առ քեզ: Օայն  
իբրև ետես ծերն, ՚ի գութ խանդաղատեցաւ, ընկէց ՚ի  
ձեռանէ զցուպն, և գնաց համբուրեաց զնա: Իբրև դար-  
ձան ՚ի սենեակ իւրեանց, ասէ ծերն ցաշակերտն իւր,  
ոչինչ ասացեր նմա, յորոց ասացի քեզ ասել գմա, և  
նա ասէ, ոչ հայր: Յայնժամ ուրախ եղև և ասէ

ցաշակերտն իւր. յայսմհետէ դու վարդապետ իմ, և ես աշակերտ քո, այսօր դու ես փրկիչ անձին իմոյ, և առիթ փրկութեան յախտէ նախանձու:

Ե:

Կերպարանք կապկի նման է կերպարանաց մարդոյ: Գու վութեան արժանաւոր այն բժիշկն է, որ զանյուսացեալ հիւանդն յանձն առնու բժշկել: Արժանի է մշակն վարձու իւրոյ: Այր ոմն մեծատուն աղաչէր զմի որ ՚ի ծերոցն խնդրել ինչ ՚ի նմանէ ՚ի պէտտ իւր, ասէ ծերն, ես ոչ եմ կարօտ ընչից, բաւական են ինձ ձեռքն իմ և գործք նորա:

Կ:

Չայրն եսայի առեալ երբեմն զզամբիւղ իւր՝ գնաց առ երկրագործ ոմն և ասէ, տուր ինձ ցորեան, ասէ ցնա երկրագործն, օրպէս կամիս առնուլ ցորեան, զի ոչ աշխատեցար ՚ի հնձելն. ասէ ցնա ծերն, ոչ երբէք առնուն ցորեան, որք ոչն հնձեն, ասէ ցնա մշակն՝ ոչ, և այսպէս մեկնեցաւ անտի: Աղբարքն որք էին ընդ նմա, անկան յոտս նորա և ասեն, զինչ գործ գօրծեցեր հայր, ասէ ցնոսա յօրինակ ձեզ արարի եղբարք, զի որ թափուր է ՚ի գործոց առաքինութեան, ոչինչ վարձս աուցէ յասուծոյ:

ԳՂՄԻՒ ԺԻ:

Թ. Ա.

№ 8212

ա:

Աշխարհս բանիւ տեառն հաստատեալ կայ: Անշունչ կային զգիշերն ողջոյն: Անպակաս յիշեմք զձեզ յաղօթս մեր: Աներկիւղ անցաք ընդ մեջ նոցա: Աթէ առաջ նորդն ուղիղ գնայ, հետեեալքն անխտոր ճանապարհորդեն: Թէև յանիրաւի ինչ թշնամանիցիս, համբեր:







9 U 10

No 82 102